



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

✓ **Կարևոր է իմանալ, որ քարաթափումները վտանգավոր են շրջակա միջավայրի և մարդկանց համար. դրանց հետևանքով կարող են վնասվել ավտոճանապարհներ, շինություններ, ենթակառուցվածքներ:**

✓ **Հիշե՛ք, որ քարաթափման պատճառները նվազեցնում են ժայռերի ամրությունը և կայունությունը, ինչը բարձրացնում է քարաթափման վտանգը: Քարաթափումը կարող է տեղի ունենալ քարերի կամ ժայռերի մասերի սահելու, շրջվելու կամ ընկնելու պատճառով:**

ՆԳՆ փրկարար ծառայությունը հորդորում է քաղաքացիներին լինել իրազեկված և պահպանել զգոնություն:



📞 112 🌐 rescue.mia.gov.am




ՔԱՐԱԹԱՓՈՒՄ

ՀՀ ՆԳՆ
ՓՐԿԱՐԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ի՞ՆՉ Է ՔԱՐԱԹԱՓՈՒՄԸ

Լեռների և ձորերի զառիվայր ու զառիթափ լանջերից խոշոր, հաճախ հսկայական չափերի ապարազանգվածների պոկումն ու փլուզումն է, որն առաջանում է գլխավորապես լեռնային ապարների հողմահարության ընթացքների և մակերևութային ու ստորգետնյա ջրերի ներգործությունից դրանց կապակցվածության թուլացման հետևանքով:



ՔԱՐԱԹԱՓՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- երկարատև տեղումները
- ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունները (սառեցում/հալոցք)
- ստորգետնյա ջրերի հոսքերի փոփոխությունները
- ապարների և շրջակա նյութերի էրոզիան
- երկրաշարժերը

ԿԱՆԽԱՐԳԵԼԵ՛Ք ՔԱՐԱԹԱՓՈՒՄԸ

- Ճամփեզրերին կամ բնակավայրերի մոտ գտնվող ժայռաբեկորների մակերեսը փակե՛ք և ամրացրե՛ք ցանցային կոնստրուկցիաներով, ցանկապատերով:
- Վտանգավոր հատվածներում իրականացրե՛ք հարկադիր քարաթափումներ:
- Շինարարության ընթացքում օգտագործե՛ք հատուկ նյութեր ու տեխնիկաներ, նվազեցնելով քարաթափման վտանգը:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՔԱՐԱԹԱՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Վտանգի դեպքում անմիջապես տեղեկացրե՛ք պատասխանատու ծառայություններին՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար:
- Արագ հեռացե՛ք վտանգավոր տարածքից և շարժվե՛ք դեպի անվտանգ տեղ՝ խուսափելով ընկնող քարերից:
- Պաշտպանվե՛ք թափվող քարերից՝ արագ կողմնորոշվելով ու ապաստան գտնելով (օրինակ՝ ծառերի տակ կամ փոքր անցումներում):
- Կանխատեսե՛ք ավտոճանապարհների փակման կամ փլուզման վտանգները: Եթե ճանապարհը կամ դրա հատվածը գտնվում է քարաթափման վտանգի գոտում, անմիջապես շարժվեք դեպի մոտակա անվտանգ տարածք՝ օգտագործելով ձեր տրանսպորտային միջոցը:
- Խուսափե՛ք բարձր և կտրուկ տարածքներից, հատկապես վատ եղանակային պայմաններում, քանի որ քարաթափման վտանգ կա:
- Խուսափե՛ք կամուրջներից, քանի որ քարաթափման դեպքում դրանց փլուզման վտանգը մեծ է:
- Հետևե՛ք օդերևութաբանների կանխատեսումներին և պաշտոնական տեղեկատվությանը:

